ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 65 Ա   ք.Արտաշատ

„07„ Ապրիլ 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N46-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N1 հավելվածի 6-րդ կետի 4-րդ ենթակետով և 18-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի հանրապետության Արարատի մարզպետի 08 դեկտեմբերի 2022 թվականի N ՄՈ/369-2022-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի» հավելվածի 8.3 կետի 8.3.1 կետերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2023 թվականի ապրիլի 20-ին Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքի Գինեվետ բնակավայրի «ՎԵԴԻ ԱԼԿՈ» փակ բաժնետիրական ընկերությունում կազմակերպել և անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն՝ «Հրդեհաշիջման և փրկարարական աշխատանքների իրականացումը» թեմայով:
2. Ուսումնավարժությանը նախապատրաստվելու և այն արդյունավետ անցկացնելու նպատակով սահմանել՝

1) ուսումնավարժության ղեկավար հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետը.

2) ուսումնավարժության ղեկավարի տեղակալ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի տեղակալ Վլադիմիր Խաչատրյանը.

3) ուսումնավարժության ղեկավարի տեղակալ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության փոխգնդապետ Արսեն Ղուկասյանը:

3. ՈՒսումնավարժությանը ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչությանը.

2) Հայաստանի Հանրապետության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության Վեդու հրշեջ-փրկարարական ջոկատից երեք ավտոմեքենա (երկու հրդեհաշիջման և մեկ օժանդակ ավտոմեքենաներ).

3) Հայաստանի Հանրապետության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության Արտաշատի հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ ավտոմեքենա (վթարափրկարարական ավտոմեքենա).

4) Հայաստանի էլեկտրական ցանցեր փակ բաժնետիրական ընկերության «Արաքս» մասնաճյուղի «Արարատ» էլեկտրական ցանցը (համաձայնությամբ).

5) Հայաստանի Հանրապետության ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 1-ին վաշտի 2-րդ դասակից մեկ հաշվարկ.

6) Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Վեդի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության շտապօգնության մեկ գծային բրիգադ.

7) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Արարատի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի Վեդու տարածքային տեղամասի վթարավերականգնման ծառայությունը (համաձայնությամբ).

8) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության «Վեդի» տեղամասի վթարավերականգնողական խումբը (համաձայնությամբ):

4. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի տեղակալ Վլադիմիր Խաչատրյանին՝

1) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

2) կազմակերպել համագործակցությունն ուսումնավարժությանը ներգրավված ուժերի միջև.

5. Ուսումնավարժության ղեկավարի տեղակալ, Հայաստանի Հանրապետության փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարարական ծառայության փոխգնդապետ Արսեն Ղուկասյանին՝

1) ուսումնավարժության անցկացման պատրաստության մասին զեկուցել 2023 թվականի ապրիլի 7-ին.

2) ապահովել ուսումնավարժության անցկացման համար սահմանված փաստաթղթերի ժամանակին մշակումը.

3) ուսումնավարժության անցկացումից հետո եռօրյա ժամկետում ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան փոխգործողությունների պլանները.

2) պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով և սարքավորումներով.

3) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

4) ուսումնավարժության ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները, չվնասել պետական և մասնավոր գույքը.

5) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ուսումնավարժության ղեկավարի տեղակալ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի տեղակալ Վլադիմիր Խաչատրյանին:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**